# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/5

26 հունիսի 2024 թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 25 անդամներ:
Բացակա էին Լուսինե Սանոյանը, Վահան Հոնանյանը, Սոնա Հովհաննիսյանը, Աստղիկ Բեյբուտյանը, Հարություն Նիկողոսյանը, Քնարիկ Հարությունյանը, Կալիպսե Ասատրյանը, Վարդեվան Հակոբյանը

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Կարեն Բադալյանը:**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանը:**

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Գյումրու համայնքապետարանի ստորաբաժանումների պետերը, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ խմբակցությունների փորձագետներ:**

LՍԵՑԻՆ

*1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*
*(Զեկ. ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 121-Ա)*

LՍԵՑԻՆ

*2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 23-Ի N 3–Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*
*(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ մասերի, 33-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի առաջարկը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 3-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին կետի 1-ին ենթակետի «6 335 812 800 (վեց միլիարդ երեք հարյուր երեսունհինգ միլիոն ութ հարյուր տասներկու հազար ութ հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «6 743 880 724 (վեց միլիարդ յոթ հարյուր քառասուներեք միլիոն ութ հարյուր ութսուն հազար յոթ հարյուր քսանչորս)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «6 653 294 400 (վեց միլիարդ վեց հարյուր հիսուներեք միլիոն երկու հարյուր իննսունչորս հազար չորս հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «7 061 362 324 (յոթ միլիարդ վաթսունմեկ միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար երեք հարյուր քսանչորս)» թվով և բառերով:

2. Որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2,3,4 հավելվածների:

3.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ կատարել համապատասխան փոփոխությունները՝ օրենքով սահմանված կարգով:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 122-Ն)*

**LUԵՑԻՆ**

***3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 283-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2023 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Գյումրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 27-ի N 282-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 283-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) 2-րդ կետով հաստատված NN 38,54 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն թվականի հուլիսի 1-ից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 123-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 4 (ՉՈՐՍ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԼԵՆԱ ՔԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Խ. Ավետիսյանի անվ. թիվ 7 երաժշտական դպրոց», «Արամ Սարգսյանի անվ. խաղերի մանկապատանեկան մարզադպրոց», «Համալիր մանկապատանեկան մարզադպրոց», «Էլիթիա-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություններ) տնօրենների գրությունները՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2024 թվականի հունիսի 10-ին 10065, մայիսի 10-ին 8187, հունիսի 11-ին 10120, մայիսի 22-ին 8917 թվագրություններով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**.

1.Կազմակերպություններին գույքի ձեռքբերման և ընթացիկ վերանորոգման նպատակով որպես նվիրատվություն հատկացնել 2 021 800 (երկու միլիոն քսանմեկ հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 124.1)*

**ԼՍԵՑԻՆ**

***5.ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 115 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ԼԵՆԱ ՔԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի ՀանրապետությանՇիրակիմարզիԳյումրիհամայնքիավագանու 2017թվականինոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ինկետովհաստատվածկարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով սոցիալապես անապահովթվով 115 (մեկհարյուրտասնհինգ) քաղաքացիների՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին** որոշում է.

1. Թվով 115(մեկհարյուրտասնհինգ) անձանց որպես դրամական օգնություն հատկացնել 1 610 000 (մեկմիլիոն վեց հարյուր տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավորֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի ՀանրապետությանՇիրակիմարզիԳյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 125-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***6.2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ, ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. 2023 թվականի ընթացքում աշխարհի, Եվրոպայի և Հայաստանի Հանրապետության առաջնություններում չեմպիոններ և մրցանակակիրներ պատրաստած գյումրեցի մարզիչներին շնորհել դրամական պարգևներ՝ 6.624.000 (վեց միլիոն վեց հարյուր քսանչորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝
1) սույն որոշման 1-ին կետում նշված գումարից 3.312.000 (երեք միլիոն երեք հարյուր տասներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամի վճարումը կատարել 2024 թվականի հուլիս ամսին, իսկ մնացած 3.312.000 (երեք միլիոն երեք հարյուր տասներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամի վճարումը կատարել 2024 թվականի դեկտեմբեր ամսին,
2) սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4727) «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 126-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***7.2023-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՉԵՄՊԻՈՆ ԴԱՐՁԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

2023-2024 թվականների ընթացքում աշխարհի և Եվրոպայի առաջնություններում չեմպիոն դարձած գյումրեցի մարզիկներին և նրանց մարզիչներին խրախուսելու նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 6-րդ ենթակետի «գ» պարբերության, 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. 2023-2024 թվականների ընթացքում աշխարհի և Եվրոպայի առաջնություններում չեմպիոն դարձած մարզիկներին և նրանց մարզիչներին շնորհել դրամական պարգևներ 15.190.000 (տասնհինգ միլիոն մեկ հարյուր իննսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 127-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***8.ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ՝ Անդրանիկ Կարապետյանի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մարտի 22-ին N 5517 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքին՝ որպես նվիրատվություն, հատկացնել 400 000 ( չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2024 թվականին նախատեսված բազմաբնույթ գրական միջոցառումները կազմակերպելու և իրականացնելու համար:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ

շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպություն նախագահ Անդրանիկ Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 128-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***9.«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

«Հայաստանի նկարիչների միություն» հասարակական կազմակերպությունը Գյումրի համայնքում իրականացնում է «Հայաստանի գույները» խորագրով ջրաներկի միջազգային երկրորդ փառատոնը: Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով «Հայաստանի նկարիչների միություն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպության) նախագահ Սուրեն Սաֆարյանի համայնքի ղեկավարին ուղղված դիմումը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունիսի 14-ին N 7236 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Կազմակերպությանը՝ որպես նվիրատվություն հատկացնել 600 000 (վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2024 թվականի ընթացքում Գյումրի համայնքում իրականացվող «Հայաստանի գույները» խորագրով ջրաներկի միջազգային երկրորդ փառատոնի իրականացման նպատակով:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 129-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***10.ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԿԱՊԻՏԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՎԵՏԻՔԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՇԻՐՄԱՔԱՐԻ ԵՎ ՀՈՒՇԱՔԱՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՈՒ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Արցախի Հանրապետության պաշտպանության և 2020 թվականի 44-օրյա պատերազմում մարտական գործողությունների մասնակից կապիտան Արամայիս Ավետիքի Ղազարյանը հուղարկավորված է Գյումրի համայնքի « Շիրակ» զինվորական պանթեոնում: Կապիտան Արամայիս Ավետիքի Ղազարյանի գերեզմանի շիրմաքարի և հուշաքարի ձեռք բերման ու դրանց տեղադրման համար կարիք կա գումար հատկացնելու:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով և հիմք ընդունելով «Հավերժ հիշատակ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Էդվարդ Բաղրամյանի համայնքի ղեկավարին ուղղված 2024 թվականի մայիսի 02-ի զեկուցագիրը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Ընկերությանը հատկացնել 1 350 000 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ Արցախի Հանրապետության պաշտպանության և 2020 թվականի 44-օրյա պատերազմում մարտական գործողությունների մասնակից՝ կապիտան Արամայիս Ավետիքի Ղազարյանի գերեզմանի շիրմաքարի և հուշաքարի ձեռք բերման ու դրանց տեղադրման շինարարական աշխատանքների համար:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/2/7 գործառական դասակարգման (5112) « Շենքերի և շինությունների շինարարություն» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Էդվարդ Բաղրամյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 130-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***11.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ԹՎՈՎ 3 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻՑ ՄԱՍՀԱՆՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐՈՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման և էներգաարդյունավետության բարձրացման նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 4-րդ, 25-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» N 86-Ա որոշման 1-ին կետով հաստատված ժամանակացույցի 25-րդ կետի դրույթներով

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնապահպանական հարկ վճարվող թվով 3 ընկերությունների կողմից վճարված բնապահպանական հարկից մասհանվող գումարներով «Գյումրի քաղաքում բակային սպորտային վարժասարքերի ձեռքբերում և տեղադրում» բնապահպանական ծրագրին՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել,որ
   1) ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 1 575 000 (մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,
   2) ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 131-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***12.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԱՂԱՍԻ ՇԱԲՈՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով «Աղասի Շաբոյան ժողովրդական պարերի կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ կազմակերպություն) նախագահ Մ.Շաբոյանի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը՝ (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հունիսի 14-ին N 10452 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Կազմակերպությանը՝ որպես նվիրատվություն, հատկացնել 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ, Մովսես Խորենացու մեդալակիր՝ Աղասի Շաբոյանի հիմնադրած «Շիրակ» ժողովրդական պարերի համույթի հոբելյանական 85 ամյակին նվիրված համերգի կազմակերպման և անցկացման համար:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության նախագահ Մ.Շաբոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 132-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***13.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՕՐ » ԱՄԵՆԱՄՅԱ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 9-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրուհամայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լ.Թովմասյանի 2024 թվականի հունիսի 14-ի զեկուցագիրը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու օր» ամենամյա տոնակատարությանը նվիրված միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով հատկացնել 9 000 000 (ինը միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) «Այլ ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 133-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***14.«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 170-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու օր տոնակատարության անցկացման ամիսը սահմանելու և Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 121–Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N-170-Ա որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ լրացումը.

1) որոշման մեջ 1-ին կետի 1-ին ենթակետի «օգոստոս» բառից առաջ լրացնել «հուլիս»

բառը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 134-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***15.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄՈՒՇ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի կրթության բաժնի պետ՝ Շ.Ալեքսանյանի 2024թվականի հունիսի 17-ի Զ/1243 զեկուցագիրը՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1.«Մուշ զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 378 000 (երեք հարյուր յոթանասունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ գույքի ձեռքբերման նպատակով:
2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Շ. Ալեքսանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 135-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***16.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԼԻԱՆԱ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Լիանա-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրենի գրությունը՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2024 թվականի հունիսի 20-ի 10727 թվագրության)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1.Կազմակերպությանը, որպես նվիրատվություն հատկացնել 1 524 567 (մեկ միլիոն հինգ հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր վաթսունյոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ գազասպառման համակարգի նախագծային փոփոխության և ազդանշանային համակարգի տեղադրման համար:
2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրենին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 136-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***17.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՄԵՆՈՒԱ ՄԿՐՏՉՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 84-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ ծրագիր), հաշվի առնելով ծրագրի վերաբերյալ հանրային բաց լսումների արդյունքները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել ծրագիրը՝ համաձայն N 1-4 հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն,որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են միջնաժամկետ կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն՝ ըստ գործառնական ոլորտների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 01-ից:

Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 137-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***18.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ մասերի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և սահմանել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Մինչև քվեարկությունը Գյումրի համայնքի ղեկավար Վ.Սամսոնյանն առաջարկեց հավելվածով ներկայացված՝ աճուրդով օտարման ենթակա հողամասերի ցանկից հանել 19-22 տողերը: Առաջարկն ընդունվեց և քվեարկության դրվեց լրամշակված նախագիծը:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 138-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***19.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարելով « Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ, 34-րդ, և 35-րդ կետերի պահանջները և սույն որոշման հավելվածում նշված դիմումատուների Գյումրի համայանքի ղեկավարին ուղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված շենք-շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ շինությունները կառուցողներին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նախաբանում նշված դիմումատուներին պատշաճ կերպով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 139-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***20.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ N158/345 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-001-1210-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.02403 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2024 թվականի մայիսի 29-ի N 01/17/04969 գրությունը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 14-ի N 2/փ-174 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N158/345 հասցեում գտնվող 08-001-1210-0013 կադաստրային ծածկագրով 0.02403 (զրո ամբողջ երկու հազար չորս հարյուր երեք հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասի՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետին և Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը արտացոլել Գյումրի համայնքը (Գյումրի քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում և ընթացիկ քաղաքաշինական քարտեզում: 3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 140-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***21.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՓՈՂՈՑ N 36/1 ՀԱՍՑԵԻ 0.1063 ՀԱ ԵՎ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՓՈՂՈՑ N 36/4 ՀԱՍՑԵԻ 0.00068 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետով և 4-րդ ենթակետի «ա» պարբերությունով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 28-ի N 01/17/02034-2024գրությունը, Շիրակի մարզպետի 2024 թվականի մայիսի 06-ի N 01/17/04196-2024 գրությունը, և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ N36/1 հասցեի 0.1063 (զրո ամբողջ մեկ հազար վաթսուներեք տասնհազարերորդական) հեկտար և Խրիմյան Հայրիկ N36/4 հասցեի 0.00068 (զրո ամբողջ վաթսունութ հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսներով հողամասերի՝ բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողերից բնակավայրերի

նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետին և Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը արտացոլել Գյումրի համայնքը (Գյումրի քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում և ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 141-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՃԱԿՆԴԵՂԻ ՊՈՒՆԿՏ N 153/037 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-001-0557-0085 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.06365 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2024 թվականի մայիսի 29-ի N 01/17/04962-2024 գրությունը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 14-ի N 2/փ-173 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ճակնդեղի պունկտ N153/037 հասցեում գտնվող 08-001-0557-0085 կադաստրային ծածկագրով 0.06365 (զրո ամբողջ վեց հազար երեք հարյուր վաթսունհինգ հարյուրհազարերորդական)հեկտար մակերեսով հողամասի՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետին և Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը արտացոլել Գյումրի համայնքը (Գյումրի քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում և ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 142-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N 56-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 5-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 18/04/2024 N Կ-18042024-08-0034 որոշումը և հաշվի առնելով քաղաքացի Մարտուն Գրիգորյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի մայիսի 27-ին N 9244 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի N 2/14 հասցեի 145.2 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 56-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մարտուն Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 143-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ № 2/14 ՀԱՍՑԵԻ 145.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի №2/15 հասցեի 510.0 (հինգ հարյուր տասը) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Մարտուն Կամոյի Գրիգորյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 13052024-08-0063 վկայական): Քաղաքացի Մարտուն Կամոյի Գրիգորյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 28022024-08-0025 վկայական) Լալայան փողոցի № 2/14 հասցեի 145.2 (մեկ հարյուր քառասունհինգ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ

կետով և հիմք ընդունելով քաղաքացի Մարտուն Կամոյի Գրիգորյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի մայիսի 27-ին №9244 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացի Մարտուն Կամոյի Գրիգորյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Լալայան փողոցի № 2/15 հասցեի 510.0 (հինգ հարյուր տասը) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Լալայան փողոցի № 2/14 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 145.2 (մեկ հարյուր քառասունհինգ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 6834 (վեց հազար ութ հարյուր երեսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 992296 (ինը հարյուր իննսուներկու հազար երկու հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մարտուն Կամոյի Գրիգորյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 144-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԴՈՒԴԿՈՅԻ ՓՈՂՈՑԻ N 8/1 ՀԱՍՑԵԻ 22.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Դուդկոյի փողոցի N 8/2 հասցեի 60.0 (վաթսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտեխսպասարկման արհեստանոցը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Վահրամ Արշակի Աղաբաբյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 09072020-08-0016 վկայական): Քաղաքացի Վահրամ Արշակի Աղաբաբյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 31052024-08-0027 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Դուդկոյի փողոցի N 8/1 հասցեի 22.5 (քսաներկու ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով, որ հողամասը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդով, հաշվի առնելով օտարվող հողամասին հարակից գույքերի սեփականատերերի կողմից տրված գրավոր համաձայնությունները, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ,

5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Վահրամ Արշակի Աղաբաբյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2021 թվականի նոյեմբերի 09-ին N 19680 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացի Վահրամ Արշակի Աղաբաբյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Դուդկոյի փողոցի N 8/2 հասցեի 60.0 (վաթսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասով ավտոտեխսպասարկման արհեստանոցին հարակից, Դուդկոյի փողոցի N 8/1 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 22.5 (քսաներկու ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ավտոտեխսպասարկման արհեստանոցի ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 2888 (երկու հազար ութ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 64980 (վաթսունչորս հազար ինը հարյուր ութսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Վահրամ Արշակի Աղաբաբյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 145-Ա)*

__ԼՍԵՑԻՆ__

***26.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ № 7/2 ՀԱՍՑԵԻ 67.5 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի № 1/2 հասցեի 94.09 (իննսունչորս ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և շինությունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Ալինա Հենրիկի Հունանյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 17112016-08-0051 վկայական): Քաղաքացի Ալինա Հենրիկի Հունանյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 23042024--08-0042 վկայական) Թբիլիսյան խճուղի № 7/2 հասցեի 67.5 (վաթսունյոթ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով

վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Ալինա Հենրիկի Հունանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մարտի 20-ին № 4643 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացի Ալինա Հենրիկի Հունանյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրենց պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի № 1/2 հասցեի 94.09 (իննսունչորս ամբողջ ինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Թբիլիսյան խճուղի № 7/2 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 67.5 (վաթսունյոթ ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ որպես բակ:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 299835 (երկու հարյուր իննսունինը հազար ութ հարյուր երեսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ալինա Հենրիկի Հունանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 146-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***27. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՄԿՐՏԻՉ ԼՅՈՎԱՅԻ ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՐԵՏՏԱ ՎԵԼԻԽԱՆԻ ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ N 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ (ՔՈԹԵՋ) ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 123,86 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մովսես Խորենացի փողոցի 1-ին նրբանցքի N 3 հասցեի բնակելի տունն (քոթեջ) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Մկրտիչ Լյովայի Թումասյանին և Մարետտա Վելիխանի Թումասյանին (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2012 թվականի նոյեմբերի 05-ի N ՇԴ/0904/02/12 վճիռ): Քաղաքացի Մկրտիչ Լյովայի Թումասյանը 2022 թվականի նոյեմբերի 17-ին դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին (մուտքագրված համայնքապետարանում N 21451 թվագրմամբ) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Գյումրի քաղաքի Մովսես Խորենացի փողոցի 1-ին նրբանցքի N 3 հասցեի բնակելի տան (քոթեջ) պահպանման ու սպասարկման համար

զբաղեցրած 123,86 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամաս ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ հողամասը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման հատակագծի համաձայն չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, հնարավոր չէ օտարել աճուրդով, որպես առանձին գույքային միավոր, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով և հիմք ընդունելով քաղաքացի Մկրտիչ Լյովայի Թումասյանի դիմումը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացիներ Մկրտիչ Լյովայի Թումասյանին և Մարետտա Վելիխանի Թումասյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող Գյումրի քաղաքի Մովսես Խորենացի փողոցի 1-ին նրբանցքի N 3 հասցեի բնակելի տան (քոթեջ) պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 123,86 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ ութսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 2888 (երկու հազար ութ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1,0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 357708 (երեք հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մկրտիչ Լյովայի Թումասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 147-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

***28. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԾՆՆԴԱՏԱՆ ՓՈՂՈՑ № 9/8 ՀԱՍՑԵԻ 9.65 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ծննդատան փողոցի № 9/4 հասցեի 280 (երկու հարյուր ութսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 22112023-08-0013 վկայական): Քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 18062024-08-0029 վկայական) Ծննդատան փողոցի № 9/8 հասցեի 9.65 (ինն ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս

ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 9-ին № 252 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ծննդատան փողոցի № 9/4 հասցեի 280 (երկու հարյուր ութսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Ծննդատան փողոցի № 9/8 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 9.65 (ինն ամբողջ վաթսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ընդլայնման նպատակով:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 101460 (մեկ հարյուր մեկ հազար չորս հարյուր վաթսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 148-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***29. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԾՆՆԴԱՏԱՆ ՓՈՂՈՑ № 9/9 ՀԱՍՑԵԻ 42.21 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ծննդատան փողոցի № 9/4 հասցեի 280.0 (երկու հարյուր ութսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 22112023-08-0013 վկայական): Քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 20052024-08-0012 վկայական) Ծննդատան փողոցի № 9/9 հասցեի 42.21 (քառասուներկու ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային

նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասն ուղղակի վաճառքի միջոցով իրեն օտարելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման 1-ին կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերի դրույթների, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 9-ին № 252 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել սեփականության իրավունքով իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ծննդատան փողոցի № 9/4 հասցեի 280 (երկու հարյուր ութսուն) քառակուսի մետր մակերեսով հողամասին հարակից, Ծննդատան փողոցի № 9/9 հասցեի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապատումից ազատ, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 42.21 (քառասուներկու ամբողջ քսանմեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ընդլայնման նպատակով:

2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 443795 (չորս հարյուր քառասուներեք հազար յոթ հարյուր իննսունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գայանե Մայիսի Ղուկասյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 149-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***30. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԱՆՑՈՎԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ՍՏԵՓԱՆԻԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ԱՆԻ ՎԱՐԴԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ԼԻԱՆԱ ՎԱՐԴԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ԳԱՅԱՆԵ ՎԱՐԴԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՐՎԱԾ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՉԵՐԱԶԻ ՓՈՂՈՑ № 2 ՀԱՍՑԵՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ՏԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 266.64 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Գյումրի քաղաքի Չերազի փողոց № 2 հասցեով հանրային բնակելի ֆոնդի տունը նվիրատրվել է քաղաքացիներ Վարդան Վարանցովի Կարապետյանին, Սուսաննա Ստեփանիկի Կարապետյանին, Անի Վարդանի Կարապետյանին, Լիանա Վարդանի Կարապետյանին, Աննա Վարդանի Կարապետյանին, Գայանե Վարդանի Կարապետյանին և Արմինե Վարդանի Կարապետյանին (հիմք՝ Գյումրի համայնքի ղեկավարի 1997 թվականի օգոստոսի 30-ի N 630-Ա որոշում): Քաղաքացի Սուսաննա Կարապետյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված

բնակելի տան պահպանման և սպասարկման համար, փաստացի զբաղեցրած 266.64 (երկու հարյուր վաթսունվեց ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը ուղղակի վաճառքի միջոցով իրենց օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ օտարվող հողամասը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ օտարել աճուրդային կարգով, չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 2-րդ մասով և հիմք ընդունելով քաղաքացի Սուսաննա Կարապետյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի փետրվարի 02-ին № 2496 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Քաղաքացիներ Վարդան Վարանցովի Կարապետյանին, Սուսաննա Ստեփանիկի Կարապետյանին, Անի Վարդանի Կարապետյանին, Լիանա Վարդանի Կարապետյանին, Աննա Վարդանի Կարապետյանին, Գայանե Վարդանի Կարապետյանին և Արմինե Վարդանի Կարապետյանին ուղղակի վաճառքի միջոցով օտարել որպես ընդհանուր բաժնային սեփականություն իրենց նվիրատրված Չերազի փողոց № 2 հասցեով հանրային բնակելի ֆոնդի տան պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 266.64 (երկու հարյուր վաթսունվեց ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը՝ համաձայն կից տրվող հատակագծային ուրվանկարի:
2. Օտարվող հողամասերի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 2803452 (երկու միլիոն ութ հարյուր երեք հազար չորս հարյուր հիսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սուսաննա Ստեփանիկի Կարապետյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 150-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***31. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 24/4 ՀԱՍՑԵԻ 6,38 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՀԱՐԹԱԿԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՎԱԾ 7,58 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 24 հասցեի շենքի N 35 հասցեի դիագնոստիկ կենտրոնը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Դավիթ Անատոլիի Պալյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06222024-08-0035 վկայական): Քաղաքացի Դավիթ Անատոլիի Պալյանի կողմից լիազորված անձ Ավետ Ավետիսյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ քաղաքացի Դավիթ Անատոլիի Պալյանին սեփականության

իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 24 հասցեի շենքի N 35 հասցեի դիագնոստիկ կենտրոնին հարակից, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 29052024-08-0052 վկայական) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 24/4 հասցեի 6,38 (վեց ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ինքնակամ հարթակը և նրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված 7,58 (յոթ ամբողջ հիսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը քաղաքացի Դավիթ Անատոլիի Պալյանին վարձակալության տրամադրելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, շինությունը և հողամասը որպես առանձին գույքային միավոր հնարավոր չէ տրամադրել մրցույթով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 4-րդ բաժնի 34.2-րդ, 35-րդ կետերի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Դավիթ Անատոլիի Պալյանի կողմից լիազորված անձ Ավետ Ավետիսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի օգոստոսի 25-ին N 17702 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղանդիլյան փողոցի N 24/4 հասցեի 6,38 (վեց ամբողջ երեսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով ինքնակամ հարթակը և նրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցված 7,58 (յոթ ամբողջ հիսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը 10 (տասը) տարի ժամկետով վարձակալության տրամադրել տվյալ շինությունը իրականացրած քաղաքացի Դավիթ Անատոլիի Պալյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության և հողամասի վարձակալության վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Դավիթ Անատոլիի Պալյանի կողմից լիազորված անձ Ավետ Ավետիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 151-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***32. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի N 166-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(ԶԵԿ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին»օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 5-րդ մասի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հայաստանի **Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի հոկտեմբերի 09-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու Վարպետաց փողոցի N 101 հասցեում գտնվող համայնքային ենթակայության «Շիրազի հուշատուն-թանգարան»-ի նկուղային հարկից 60,6 քառակուսի մետր մակերեսով տարածքը վարձակալության տրամադրելու և վարձավճարի չափ սահմանելու մասին» N 166-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 152-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***33. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՊԵՏԱՑ ՓՈՂՈՑ N 101 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ ԹԱՆԳԱՐԱՆ»-Ի ՇԵՆՔԻ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 55,58 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է**
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2017651 վկայական) Վարպետաց փողոց N 101 հասցեի 116,18 (մեկ հարյուր տասնվեց ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով նկուղային տարածքից 55,58 (հիսունհինգ ամբողջ հիսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով առանձնացված տարածքը, մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով օգտագործման՝ մշակութային միջոցառումներ, ցուցահանդեսներ կազմակերպելու նպատակով:
2.Վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 125000 (մեկ հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Տարածքի վարձակալության ժամկետ սահմանել 3 (երեք) տարի:
4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 153-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***34. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐՊԵՏԱՑ ՓՈՂՈՑ N 101 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՀՈՒՇԱՏՈՒՆ ԹԱՆԳԱՐԱՆ»-Ի ՇԵՆՔԻ ՆԿՈՒՂԱՅԻՆ ՀԱՐԿԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 60,6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, համաձայն Հ Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ

մասերի՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2017651 վկայական) Վարպետաց փողոց N 101 հասցեի 116,18 (մեկ հարյուր տասնվեց ամբողջ տասնութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով նկուղային տարածքից 60,6 (վաթսուն ամբողջ վեց տասնորդական) քառակուսի մետր մակերեսով առանձնացված տարածքը, մրցութային կարգով տրամադրել վարձակալության իրավունքով օգտագործման՝ մշակութային միջոցառումներ, ցուցահանդեսներ կազմակերպելու նպատակով:
2.Վարձակալության տարեկան վարձավճարի մեկնարկային գինը սահմանել 125000 (մեկ հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Տարածքի վարձակալության ժամկետ սահմանել 3 (երեք) տարի:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:
Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 154-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**
***35. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 145-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)***
Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 5-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2023 թվականի սեպտեմբերի 18-ի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-18092023-08-0131 որոշումը և հիմք ընդունելով քաղաքացի Գառնիկ Համլետի Գրիգորյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունիսի 06-ին N 9926 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Շահումյան փողոցի N 117/1 հասցեի 19.9 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 145-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Գառնիկ Համլետի Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 155-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**
***36. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող ապամոնտաժված հենասյուները աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գին սահմանելու մասին» N 11-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) 2-րդ կետի «180 000 (մեկ հարյուր ութսուն հազար)» թիվը և բառերը փոխարինել «200 000 (երկու հարյուր հազար)» թվով և բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 156-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***37. «ԱՐՄԷԿՈՏԵԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 28-րդ կետով, հիմք ընդունելով «ԱՐՄԷԿՈՏԵԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ընկերություն) նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում 2024 թվականի հունիսի 05-ին կայացած Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի Բուլվարային թաղամասի և աղբավայրի միջև ընկած հատվածում կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցման վերաբերյալ հանրային բաց լսման և քննարկման արձանագրությունը և հաշվի առնելով «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի տնօրեն Լևոն Օհանեսյանի և ընկերության տնօրեն Միխաիլ Բադինի գրությունները (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի մարտի 03-ին N 4311 և ապրիլի 22-ի N 7218 թվագրումներով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ նախնական համաձայնություն ընկերությանը Գյումրի համայնքի Բուլվարային թաղամասի և աղբավայրի միջև ընկած հատվածում կենցաղային թափոնների վերամշակման գործարանի կառուցման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի և ընկերության տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 157-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***38. ՍԱՄՎԵԼ ԽԱՉԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ ԱՄՍԻՑ ՄԻՆՉԵՎ 2024ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ ԱՄԻՍԸ ՆԵՐԱՌՅԱԼ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՏՈՒՅԺԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***(Զեկ. ՇՈՒՌԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ)***

Սամվել Խաչիկի Ավետիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող «ԻՍՈՒԶՈՒ ՌՈԴԵՕ 3.2» (ISUZU RODEO 3.2) մակնիշի, 17OS 802 հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ տրանսպորտային միջոց) գույքահարկի 2021թվականի հունվար ամսից մինչև 2024 թվականի հունիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ արտոնություն սահմանելու խնդրանքով: Տրանսպորտային միջոցը, որը սեփականության իրավունքով պատկանում է Սամվել Խաչիկի Ավետիսյանին, 2020 թվականի քառասունչորսօրյա պատերազմի ժամանակ նոյեմբերի 09-ի հրետակոծության հետևանքով վնասվել է, որի պատճառով պիտանի չի եղել հետագա շահագործման համար և մնացել է Բերձոր քաղաքում (հիմք՝ Բերձոր համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից 2024 թվականի ապրիլի 19-ին տրված N 6 տեղեկանքը) և ենթակա է հաշվառումից հանման խոտանման միջոցով: 2019 թվականի հունվար ամսից մինչև 2020 թվականի դեկտեմբեր ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորության գումարը կազմել է 152.310(մեկ հարյուր հիսուներկու հազար երեք հարյուր տասը)Հայաստանի Հանրապետության դրամ, որը Սամվել Խաչիկի Ավետիսյանի կողմից վճարվել է 2024 թվականի հունիսի 11 –ին: Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, 8-րդ, 9-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Սամվել Խաչիկի Ավետիսյանի (հաշվառված՝ քաղաք Գյումրի Աբովյան փողոց 2բ տուն հասցեում, անձնագիր՝ AU0212403, տրված՝ 2021թվականի մարտի 26-ին, ոստիկանության 016-ի կողմից, սոցիալական ապահովության քարտ 3601770032) դիմումը (համանքապետարանում մուտքագրված 2024թվականի մայիսի 06-ին N7929թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Սահմանել արտոնություն Սամվել Խաչիկի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցի գույքահարկի 2024 թվականի հունիսի 26-ի դրությամբ 2021 թվականի հունվար ամսից մինչև 2024 թվականի հունիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի մայր գումարների և տույժերի վճարումների նկատմամբ՝ ազատելով գույքահարկի ընդամենը 239.130 (երկու հարյուր երեսունինը հազար մեկ հարյուր երեսուն) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից, որից մայր գումարը 2021 թվականի հունվար ամսից մինչև 2024 թվականի հունիս ամիսը ներառյալ ընկած ժամանակաշրջանի համար կազմում է 203.876(երկու հարյուր երեք հազար ութ հարյուր յոթանասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, տույժը՝ 35.254 (երեսունհինգ հազար երկու հարյուր հիսունչորս) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամվել Խաչիկի Ավետիսյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 158-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***39. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋՈՑՈՎ «ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ)***

Հաշվի առնելով 2016 թվականի մայիսի 11-ին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի(այսուհետ՝ ՎԶԵԲ) և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) վարկային, և ՎԶԵԲ-ի և Գյումրու համայնքապետարանի միջև ստորագրված Ծրագրի համաձայնագրերի 2024 թվականի փետրվարի 16-ին ստորագրված, համապատասխանաբար թիվ 2 և թիվ 1 լրացումները՝ ՎԶԵԲ-ը Ծրագրի իրականացնող խմբին ցուցաբերվող աջակցության ծառայությունների (մանրամասն նախագծերի պատրաստում, շինաշխատանքների հեղինակային և տեխնիկական վերահսկողության իրականացում, ճանապարհային անվտանգության աուդիտի իրականացում, շրջակա միջավայրի, սոցիալական և առողջապահական ազդեցությունների գնահատում և գործողությունների պլանի կազմում) ձեռք բերման նպատակով տրամադրում է 750,000 (յոթ հարյուր հիսուն հազար) եվրոյի չափով տեխնիկական համագործակցության դրամաշնորհ: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջացել հաստատելու նշված դրամաշնորհի համաձայնագիրը: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթներով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի՝ ի դեմս Գյումրի համայնքի ղեկավարի և ՎԶԵԲ-ի միջև ստորագրվող տեխնիկական աջակցության դրամաշնորհային համաձայնագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 159-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***40. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 171-Ն որոշման 1-ին կետով ընդունված կանոնակարգի 96-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու հերթական յոթերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի սեպտեմբերի 10-ը՝ ժամը՝ 12:00:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 160-Ա)*

**Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի**

Վ.Սամսոնյան________________

Գ.Մելիքյան________________

Մ.Սահակյան________________

Տ.Հովհաննիսյան________________

Ա.Հովհաննիսյան________________

Թ.Համբարձումյան________________

Ն.Պողոսյան________________

Գ.Պասկևիչյան________________

Խ.Վարաժյան________________

Հ.Ասատրյան________________

Ս.Խուբեսարյան________________

Ա.Պապիկյան________________

Ն.Ղազարրյան________________

Ա.Մաթևոսյան________________

Ջ.Միքայելյան________________

Ե.Խանամիրյան________________

Շ.Արամյան________________

Լ.Մուրադյան________________

Հ.Ստեփանյան________________

Գ.Մանուկյան________________

Կ.Սոսյան______________

Ս.Ադամյան______________

Ն.Միրզոյան______________

Հ.Մարգարյան ______________

Կ.Մալխասյան______________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ

**ք.Գյումրի**
**«26» հունիսի. 2024 թվական**